

4.3. Զբոսաշրջություն

4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2014թ. հունվար-սեպտեմբերին հանրապետություն են ժամանել<sup>1</sup> 941 151 զբոսաշրջիկներ<sup>2</sup> կամ 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 13.6%:

2014թ. հունվար-սեպտեմբերին զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է<sup>1</sup> 886 251 մարդ<sup>1</sup> կամ 2013թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 12.5%:

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2013-2014թթ. հունվար-սեպտեմբերին

	2013թ. հունվար-սեպտեմբեր	2014թ. հունվար-սեպտեմբեր	2014թ. հունվար-սեպտեմբերը 2013թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ
<b>Հյուրանոցների քանակը</b> , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	74	63	85.1
<b>Ժամանողներ</b>			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	828 483 <sup>0</sup>	941 151	113.6
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցային տնտեսության օբյեկտներ	113 614	121 812	107.2
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	714 869 <sup>0</sup>	819 339	114.6
<b>Մեկնողներ</b>			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ <sup>2</sup>	787 602 <sup>0</sup>	886 251	112.5
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջային գործակալությունների կողմից	6 066	5 837	96.2
ինքնուրույն	781 536 <sup>0</sup>	880 414	112.7

<sup>1</sup>Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ 2013թ. իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

<sup>2</sup> Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

Ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտներից ստացված հաշվետվությունների տվյալների, 2014թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 28.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 33.9%-ը՝ ԵՄ երկրներին և 37.9%-ը՝ այլ երկրներին:

**ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2013-2014թթ. հունվար-սեպտեմբերին<sup>1</sup>**

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2013թ. հունվար-սեպտեմբեր	2014թ. հունվար-սեպտեմբեր	
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>107.2</b>
այդ թվում՝			
<b>ԱՊՀ երկրներ</b>	<b>27.0</b>	<b>28.2</b>	<b>112.4</b>
որից՝			
Ուկրաինա	2.8	3.3	128.4
Ռուսաստանի Դաշնություն	21.8	23.0	113.2
ԱՊՀ այլ երկրներ	2.4	1.9	86.5
<b>ԵՄ երկրներ</b>	<b>37.2</b>	<b>33.9</b>	<b>97.6</b>
որից՝			
Նիդերլանդներ	1.5	0.9	63.0
Իտալիա	6.8	5.1	79.4
Ֆրանսիա	7.9	8.1	110.5
Գերմանիա	6.5	5.8	96.2
Միացյալ Թագավորություն	2.9	4.1	150.3
ԵՄ այլ երկրներ	11.6	9.9	91.4
<b>Այլ երկրներ</b>	<b>35.8</b>	<b>37.9</b>	<b>113.4</b>
որից՝			
ԱՄՆ	12.3	12.7	110.9
Իրանի Իսլամական Հանրապետություն	5.9	7.1	128.3
Վրաստան	2.6	2.9	117.5
Թուրքիա	0.6	0.6	94.7
Կանադա	1.4	1.6	126.0
այլ երկրներ	13.0	13.0	107.6

<sup>1</sup>Բերված տվյալներն արտացոլում են «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների մասին» ՀՀ օրենքով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ այցելության նպատակի

մարդ

	2013թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %	2014թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %
<b>Ժամանողներ<sup>1</sup></b>				
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>113 614</b>	<b>100.0</b>	<b>121 812</b>	<b>100.0</b>
որոնցից ըստ նպատակի				
գործնական	37 082	32.6	35 296	29.0
հանգստի և ժամանցի	30 341	26.7	42 580	35.0
կրթության	4	0.0	351	0.3
բուժման	400	0.4	560	0.5
այլ	45 787	40.3	43 025	35.3
<b>Մեկնողներ<sup>2</sup></b>				
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ</b>	<b>6 066</b>	<b>100.0</b>	<b>5 837</b>	<b>100.0</b>
որոնցից ըստ նպատակի				
գործնական	624	10.3	632	10.8
հանգստի և ժամանցի	2 284	37.7	2 647	45.3
կրթության	-	-	-	-
բուժման	-	-	5	0.1
այլ	3 158	52.1	2 553	43.7

<sup>1</sup> Բերված տվյալներն արտացոլում են «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների մասին» ՀՀ օրենքով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: